16781

# ԾՐԱԳԻՐ

## ՄԻՈՒԹԵԱՆ

### ՅՕԳՈՒՏ ԽՈՏՐՋՐՈՅ ԵՒ ՄՈԽՐԱԿՈՅՏԻ ԱՔՍՈՐ-ԵԱԼՆԵՐՈՒ ԱԶԱՏՄԱՆ.

НАХИЧЕВАНЬ н-Д.
Типографія С. Я. Авакова.
1917.

362
Ծ-89

8868

362
Ծ-89
Կր.

# ԾՐԱԳԻՐ

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՏԻ ԽՈՏՈՐՋՐՈՅ ԵՒ ՄՈԽՐԱԿՈՅՏԻ ԱՔՍՈՐԵԱԼՆԵՐՈՒ ԱԶԱՏՄԱՆ

Ծրագրի բաժանում

### Յօդ. Ա.

Ա. Գործել «Միութիւն յօգուտ Խոտորջրոյ և Մոխրակոյտի աքսորեալներու ազատութեան» անուան ներքոյ։

Բ. Հիւսիսային Կենտրոնական կոմիտէի գործող դիւանը բաղկացած պիտ ըլլայ եօթ անդամներէ, ընտրուած գաղտնի քուէարկութեամբ. որոնցմէ կըլլայ մի նախագահ, երկու փոխ-նախագահ, մի քարտուղար, մի փոխ-քարտուղար, մի գլխաւոր գանձապահ, և մի փոխ-գանձապահ։

Գ. Հիւսիսային Կենտրոնական Կոմիտէի դիւանը կը՚նտրուի մի տարի ժամանակաւ։

### Յօդուած Բ.

Կազմակերպութեան նպատակն

Ա. Խուզարկել [illegible] նշանակել, և յիշեալ

2299-57

խումբը իսկոյն և եթ ուղարկել պատերազմի բե-
մի ճակատ, բարձրագոյն կառավարութեան հո-
վանաւորութեան ներքոյ: Խուզարկել և որոնել
Թուրքերու տներու մէջ մեր ժողովուրդը. գտնուած
այդպիսիքը «եթէ դեռ հաշտութիւն չէ կնքուած»
անմիջապէս հասցնել Թիֆլիս և յանձնել տեղւոյն
կոմիտէին:

Բ. Խուզարկու մարմնոյ գտածները եթէ
ըլլան Կարնոյ, Մշոյ դաշտերէն, կամ յայլ տեղե-
րէն, խուզարկու խումբը ջանք պիտի ընէ իսկոյն
նոցա յանձնելու ճակատի մօտիկ գտնուող կազ-
մակերպութիւններու:

Գ. Հաշտութիւնը կնքուելուն պէս Հ. կեն-
տրոնական կոմիտէտի պարտականութիւնն է խու-
զարկու խումբը հասցնել քսան և երեք (23) հոգ-
ւոյ՝ այսպէս. Ծիճապաղէն՝ երկու անդամ, Կի-
սակէն՝ երկու, Սիւնեացէն՝ երկու Կրմանէն՝ եր-
կու, Միջին Թաղէն՝ երկու, Վերի Խէնդաձորէն՝
երեք, Կախմխուտէն՝ երկու, Վահանայէն՝ մէկ,
Քեղուտէն՝ մէկ, Վերի Մոխրակոյտէն՝ երկու,
Վարի Մոխրակոյտէն՝ երկու, Գորգանձէն՝ մէկ:

Դ. Երկար խուզարկութիւններէ վերջ եթէ
մեր ջանքը ապարդիւն անցնի և մենք մնացինք
կորուած ջախջախուած նաւի բեկորներ, եթէ
մեր կազմակերպութեան տրամադրութեան տակ



գտնուի մեծ գումար, այն գումարը որևիցէ
բարեգործական նպատակի յատկացնելու համար
կը վերապահուի որոշելու ընդհանուր համագու-
մարի իրաւասութեան:

Ծանօթութիւն. Հակառակ դէպքի մէջ եթէ
ոչոք չգտնուեցաւ, կազմակերպութեան նպա-
տակն է հաւաքել Ռուսիոյ մէջ գտնուող մեր
հայրենակից երիտասարդները, վերադարձնել
հայրենիք, և վերանորոգել մեր նուիրական
ծննդավայրը. կամ թէ հիմնել նոր գաղութ
Հայաստանի մէջ:

## Յօդուած Գ.

## Կոմիտէի պարտականութիւնը.

Ա. Հիւսիսային Կենտրոնական կոմիտէի ըն-
տրած դիւանի պարտականութիւննէ՝ լայն կեր-
պով ծանօթացնել նամակաւ, ուղարկել ներկայա-
ցուցիչներ՝ Ռուսաստանի բոլոր վայրերու մէջ
գտնուող Խառոբջրցոց և Մոխրակոյտցոց անդա-
մագրուելու. Կենտրոնական կոմիտէի մասնաւոր
շրջանն է «Տօնէցքի Պասէյն»:

Բ. Կենտրոնական կոմիտէի առաջարկու-
թեամբ և նրա գիտութեամբ պէտքէ կազմա-
կերպել ենթակոմիտէներ. Խարքով, Կիեվ, Նիկո-
լայև, Եկատերինոտար, Սիմֆէրոպոլ, Վորոնէժ,
Օսթրոկօժսք, և Թամպով քաղաքներու մէջ:

### Յօդուած Դ.

### Դրամական Գործերակերպը.

Ա. Դրամական «ֆօնտ» կազմելու համար, ժողովել դրամ կամաւոր կերպով։

Բ. Աչքի առաջ ունենալով թէ արդի օգնութիւնը, և թէ պատերազմէն յետոյ հայրենակիցներու՝ վերադարձումն դէպի հայրենիք՝ անհրաժիշտ է «ֆօնտը» մի պատկառելի գումարի հասցնել։

Գ. Կազմակերպութեան ֆօնտի համար հաւաքուած գումարը ժամանակաւոր պիտի մնայ գանձապահի քով մինչ ապագայ համագումարի որոշ փոփոխութեան։

Դ. Դրամի հաւաքման համար անդորրագրերը պէտք է ստորագրուին նախագահի ու գանձապահի ստորագրութեամբ և դիւանի կնիքով։

Ե. Եղեալ ծախքերու հաշիւները և գանձարանէն դրամ ստանալու հաշուացուցակները պէտք է ստորագրուած ըլլան նախագահի և քարտուղարի իսկական ստորագրութեամբ ու դիւանի կնիքով և դուրս տալ գանձապահի ստորագրութեամբ։

Զ. Գանձապահը պարտաւոր է ունենալ դրամարկղի տոմար, որտեղ գանձապահի գրութեամբ կը գրուին ընդհանուր Մուտքն ու Ելքը.



Մուտքը կը նշանակէ թէ որ ենթակոմտէէն ինչ համարի տակ և որքան դրամ ստացուածէ. Ելքին մէջ պիտի յայտնուի թէ որ համարի ներքև և ինչ նպատակի համար ծախսուած է դրամը։

### Յօդուած Ե.

### Դրամ հաւաքելու եղանակը.

Ա. Դրամի հաւաքումները պէտք է ընեն Կենտրոնական կոմիտէի և ենթակոմիտէի ներկայացուցիչները իւրաքանչիւրը իւր շրջանի մէջ։

Բ. Ամէն մի հաւաքուած դրամի կը տրուի անդորրագիր հաւաքող ներկայացուցիչներու ստորագրութեամբ. որոնք կը նշանակուին կենտրոնական և ենթակոմիտէի կողմէն վաւերացուած և կնիքով հաստատուած թղթերով։

*Ծանօթութիւն. Դրամ հաւաքողները անհրաժեշտ պետք է ունենան իւրաքանչիւրն իրենց կոմիտէէն յանձնարարագրութիւն վաւերացուած դիւանի կնիքով եւ ստորագրութեամբ։*

### Յօդուած Զ.

### Կոմիտէներու յարաբերութիւնը.

Ա. Հ. Կ. կոմիտէն կը գտնուի Տօնէցքի շրջանի մէջ՝ ի Լազօվայեա-Բավլօվքա Մաշուրիաններու տանը.

Բ. Հ. Կ. Կոմիտէն պիտի գործէ միահամուռ ուժով Կովկասի կենտրոնական կոմիտէի հետ, և իւրաքանչիւր գործունէութեան վերաբերեալ հարցերն պէտք է կատարուին երկուքի ներկայացուցիչներու վճռամբ։

Գ. Ենթակոմիտէներն պարտաւոր են իւրաքանչիւր ամսագլուխ հաշիւներ ներկայացնել կենտրոնական կոմիտէին իրենց գործունէութեան զեկուցմամբ։

Դ. Ենթակոմիտէներուն հաւաքուած գումարը կը մնայ իրենց ընտրած գանձապահի քով, սակայն և այնպէս ենթակոմիտէի տիւանը իրաւունք չունի և ոչ մի գաբիկ ծախսելու, բացի դրասենեակի ծախսերէն։

Ե. Կոմիտէներու ներկայացուցիչներու վճռամբ երբ կարիք զգացուի ենթակոմիտէներու քով հաւաքուած դրամն կենտրոնական կոմիտէն փոխադրելու ըստ պատշաճի ծախսելու համար, ենթակոմիտէի դիւանները պարտաւոր են անմիջապէս փոխադրել որոշեալ գումարը ըստ վերոգրեալ հասցէին ի Լազօվայեա Բավլօվքա. Եկատերինոսլաւի նահանգ։

Զ. Ենթակոմիտէներու հաւաքած դրամը կը մնայ իրենց ընտրած գանձապահի քով ժամանակաւոր, յամենայն դէպս նա ամբողջութեամբ



կապուած է կենտրոնական կոմիտէի հետ. հետեւաբար կենտրոնական կոմիտէին ըրած ծախքերը համահաւասար տոկոսով կը բաժնուին բոլոր ենթակոմիտէներու վրայ. և կենտրոնական կոմիտէի տիւանի հաշուացուցակի հիման վրայ կը պահանջուի ծախսուած գումարը փոխադրել կենտրոնական կոմիտէին. և վերջինէն ստանալ ընկալագիր։

Է. Կենտրոնական. և թէ ենթակոմիտէներու կողմէն, եթէ պէտք ըլլայ մէկ. կամ երկու անգամ ուղարկել իբր ներկայայացուցիչ. կամ կազմակերպութեան մի այլ յանձնարարութեամբ անոնց ծախքը պիտոր վճարուի միութեան գանձարանէն գնացող անդամները իրենց ստորագրութեամբ կը ներկայացնեն ցուցակներ. որոնք կը վաւերացուին տեղական տիւանի ստորագրութեամբ. ու կը վճարուեն։

Ը. Կենտրոնական կոմիտէն ունի լիազօրութիւն դրամ ծախսելու ըստ ծրագրի հրահանգներուն։

### Յօդուած Է.

### Անդամագրողներու պարտականութիւնը.

Ա. Իւրաքանչիւր անդամագրուող Խոտորջուրցի և Մոխրակոյտցի, բացի միանուագ կամաւոր տուրքերի, պարտաւոր են համագումարի

վճռած ամսավճարը կարգին վճարելու իրենց շըրջանի կոմիտէներուն։

Բ. Ապագային երբ կարիք զգացուի մեծ դրամի. համագումարի վճռմամբ պէտք է նշանակել պարտադիր վճար. ենթարկեալը պարտաւոր է վճարելու նշանակեալ գումարը առանց այլ և այլի։

Գ. Ամսավճարի գումարը պարտադիր է. և երեք ռուբլիէն ոչ պակաս. իսկ աւելի գրուելը սահմանափակեալ չէ և կամաւոր է։

Դ. Բոլոր անդամները որ կը ստորագրուին ամսավճար տալու՝ թող ի նկատի ունենան, որ այս ամսավճարը տեւողական է քըսանեհինգ (25) տարի ժամանակաւ. Սկսեալ 1917 թուի Յունիսի մէկէն. ամսավճարի փոփոխումը տեղի կրնայ ունենալ ուղիղ մէկ տարի վերջը այս թուականնէն. բնական է համագումարի որոշմամբ։

Յօդուած Ը.

Քննիչ յանձնաժողով

Ա. Կենտրոնական կոմիտէի քննիչ յանձնաժողովը բաղկացած պիտի լինի. իւրաքանչիւր ենթակոմիտէներու մի մի ներկայացուցիչներէ, և Տօնէցքի շրջանէն մի անդամ. վերջինս անպատճառ կը հրաւիրուի ենթակոմիտէներու ներկայացուցիչներու կազմէ՝ ըստ իրենց հայեցողութեան։

Բ. Իւրաքանչիւր քննիչ անդամ պէտք է ու-



նենայ ենթակոմիտէներէն վաւերացուցած յանձնարարութիւն առանց այդ յանձնարարականին կենտրոնական տիւանը իրաւունք ունի ներկայացուցիչներուն մերժելու։

Գ. Իւրաքանչիւր ենթակոմիտէ պարտաւոր է ունենալ իրենց շրջանի մէջ քննիչ յանձնաժողով, որոնք կ՚ընտրուին տեղական ժողովի կողմէն։

Դ. Ենթակոմիտէներու քննիչ յանձնաժողովը հաշիւները քննելէ վերջ պարտաւոր է կազմել արձանագրութիւն մի օրինակ կարել գործին, իսկ մի օրինակ իրենց եզրակացութեամբ ուղարկել կենտրոնական կոմիտէին։

Ե. Կենտրոնական կոմիտէն իրաւունք ունի իրեն կողմէն քննիչ ուղարկել ենթակոմիտէներուն. եթէ այդպիսիք չեն համապատասխանել գործին տեղն նշանակել ժողով և փոփոխել տիւանը։

*Ծանօթութիւն, նոյն իրաւունքը կը ներկայացուի ենթակոմիտէներու քննիչ յանձնաժողովին. երբ կենտրոնական կոմիտէն կանգնած չէ իրան կոչման բարձրութեան վրայ նշանակելով համագումար՝ տիւանը փոփոխել։*

Յօդուած Թ.

Համագումարներու նշանակումը.

Ա. Հիւսիսային կենտրոնական կոմիտէն

պարտաւոր է տարին երկու անգամ նշանակել համագումար և համագումարին զեկուցանել կենտրոնական կոմիտէի, և ենթակոմիտէներու գործունէութիւնները, և ներկայացնել ապագայ ընելիք գործելակերպի առաջարկութիւնը։

### Յօդուած Ժ.

### Խուզարկու խմբի պարտականութիւնը

Ա. Կենտրոնական կոմիտէներու, այսինքն Կովկասի և Հիւսիսային շրջանի վաւերագրերով իսկոյն մեկնել պատերազմի ճակատը և եռանդուն կերպով գործել, խուզարկել, որոնել, հարցուփորձ անել, վերջապէս ինչ միջոցաւ որ կըլլայ՝ գտնել մեր հայրենակիցներին, տեղեկութիւններ ստանալ, Օգնել. և գտնուածներուն՝ խումբի որոշմամբ, մի անդամի և դեմքի հովանաւորութեան ներքև հասցնել կովկասի կոմիտէին։

Բ. Կը ներկայացուի խմբապետին իրաւունք, երբ կարիք եղաւ կաշառելու քիւրտերուն, Թուրքերուն, որպէս զի վերջիններս միջնորդեն գտնելու, կամ մատնանշելու մեր տառապեալ ժողովրդին պահուած տեղերը։

Գ. Խմբի պարտականութիւնն է ամեն մի տասնհինգ օր անգամ կենտրոնական կոմիտէին



նամակաւ յայտնել իւր գործունէութիւնը մանրամասնաբար։

Դ. Խուզարկու խմբի անդամներու պարտականութիւնն է՝ գործել խմբապետի հրամամանի ներքեւ, և ոչ մի անդամ իրաւունք չունի անձնական կամ սեպհական գործերով զբաղուելու։

### Յօդուած ԺԱ.

Հաշուապահութիւնը տանել տոմարակալական ձևով, հայերէն լեզուով, իսկ պաշտօնական կնիքներն և յարաբերական թերթերն պիտի լինին Ռուսական լեզուով։

### Յօդուած ԺԲ.

### Ներքին իրաւաբանական բաժին

Ա. Երբ գործօղ անդամներն վատ վերաբերուին իրանց գործին կամ իրենց յանձնուած դրամը վատնեցին. կամ կեղծ հաստատագրութիւններով գումարը ծախսուած ցոյց տուին՝ այդպիսիներուն իսկոյն գործէն հեռացնելէ զատ՝ նախ կը յանձնուին ընկերական միջնորդ դատարանի. յանձնաւորը եթէ ճանաչուեցաւ դատապարտեալ, և չը հատուցեց հասուցած վնասը, ապա ընկերութիւնը պարտաւոր է յանձնել դատապարտեալին տէրութենական օրէնքին, և կազմակերպութիւնը

անգամ ընդմիշտ պիտի վտարէ իր շարքէն այդպիսիներուն, որպէս զի խտանալով ինչպէս որոմ չը փչացնեն առատ ցորենի հունձը։

Բ. Այն անդամները, որոնք կը մերժեն վճարելու միանուագ նուիրատուութիւն և կամ ամսավճարներ կը յանձնուին միջնորդ դատարանի. և եթէ նորէն չը յօժարուին վճարելու իրենց պարտքերը՝ այդպիսիներն ալ ենթարկել բարոյական դատավճռի, այսինքն՝ վտարել ընկերական շարքէն և ճանչնալ ինչպէս դաւաճան մեր նուիրական ու սուրբ գործին։

Գ. Եթէ խուզարկու մարմնոյ անդամներէն որ և իցէ մէկը շեղուի իր պարտականութիւնէն կամ դաւաճանէ սուրբ գործին, խմբապետը իրաւունք ունի իսկոյն զինքն արձակել և զեկուցանել կերտրոնական կոմիտէին վերջինս քննելով նրա յանցանքի քանակը կը յանձնէ միջնորդ դատարանի. արձակուածը այն օրէն ՛որ խմբապետը կը հեռացնէ, կը զրկուի ամսաթոշակէն։

Դ. Միջնորդ դատարանը կը լսէ դատապարտեալի պատճառաբանութիւնները և եթէ բաձաւորութիւնը գոհացուցիչ չէ ու կը հաստատուի յանձաւոր միջնորդ դատարանը կը փագօրէ հրապարակաւ յայտարարել ենթարկեալի յանցանքը։



Ե. Յանցաւորը եթէ հրապարակաւ ներողութիւն խնդրէ, ընկերներու միջնորդ դատարանը իրաւունք ունի դարցեալ զինք ընդունելու. իսկ եթէ ոչ, նա կը վտարուի կազմակերպութեան շարքէն ինչպէս անպարտաճանաչ ընկեր։

Զ. Միջնորդ դատարանի անդամներն կ՚ընտրուին իւրաքանչիւր ենթակոմիտէներէն մի մի անդամ. ընտրելով իրանց մէջէն մի նախագահ։

Ծրագիրս 1917 թ. Հունիսի 18-19-ին Խարքով տեղի ունեցած խոտորջրոյ և մոխրակոյտի 72 հայրենակցաց համագումարի համաձայնութեամբ վաւերացուած է։

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0050247
16291

Խախտայի Կենտրոնական Կոմիտէյին՝ Թուարջ[illegible] և Մ․․

Խրախուսել պարտականութիւնը ազատելու

Ի Հ[illegible] Դ[illegible]